ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. Նոյեմբերի 2-ից 3-ը ՌԴ (ք. Մոսկվա) գործուղման արդյունքների մասին

1. **<u>Անունը, ազգանունը</u>**

Հակոբ Վարդանյան

2. **<u>Զբաղեցրած պաշտոնը</u>**

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ

3. **<u>Գործուղման վայրը և ժամկետները</u>**

Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա

4. **<u>Հրավիրող կողմը</u>**

ՌԴ ատոմային էներգիայի «ՌՈՍԱՏՈՄ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ա. Լիխաչով:

5. **<u>Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)</u>**

Գործուղման նպատակն է եղել մասնակցել ս.թ. նոյեմբերի 2-ին Մոսկվայում Ժողովրդական տնտեսության ձեռքբերումների ցուցասրահ-համալիրի *(«ВДНХ»)* տարածքում նախատեսված «Ատոմ» տաղավարի միջուկային էներգիայի թանգարանի բացման շնորհանդեսին:

Գործուղման նպատակն է եղել նաև ՌԴ - ից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող բենզինի ինդիկատիվ հաշվեկշիռներում նախատեսվող փոփոխության ստորագրումը:

6. **<u>Քննարկված թեմաները</u>**

Գործուղման շրջանակներում հանդիպում է տեղի ունեցել «ТВЭЛ» ընկերության փոխնախագահ Օլեգ Գրիգորևի հետ՝ քննարկվել են միջուկային վառելիքի մատակարարման հետ կապված հարցեր:

Հանդիպում է տեղի ունեցել «Ռուսատոմ Օվերսիզ» ընկերության գլխավոր տնօրեն Անդրեյ

Ռոժդեստվինի հետ՝ քննարկվել են նոր բլոկի կառուցման տեխնիկատնտեսական հիմնավորումների հետ կապված հարցեր:

7. <u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը</u>

Հանդպումներ են տեղի ունեցել՝ ՌԴ ատոմային էներգիայի «ՌՈՍԱՏՈՄ» պետական կորպորացիայի գլխավոր տնօրեն Ա. Լիխաչովի, ՌԴ էներգետիկայի նախարարի առաջին տեղակալ Պավել Սորոկինի, «ТВЭЛ» ընկերության փոխնախագահ Օլեգ Գրիգորևի,ինչպես նաև «Ռուսատոմ Օվերսիզ» ընկերության գլխավոր տնօրեն Անդրեյ Ռոժդեստվինի հետ:

8.<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը</u>

Գազի, նավթամթերքների, բնական ալմաստների մատակարարման ոլորտում համագործակցության համաձայնագրի շրջանակներում նոյեմբերի 1-ին ՀՀ և ՌԴ միջև ստորագրված հավելվածով 2023 թվականի համար ավելացվել է Հայաստանի համար բենզինի քվոտան, ինչը հնարավորություն է տվել ՀՀ ներմուծողներին ՌԴ-ից գնել և ՀՀ ներմուծել հավելյալ 60 հազար տոննա բենզին:

9. <u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.</u> Պայմանավորվածություն է ձեռք բերվել «Ռուսատոմ Օվերսիզ» ընկերության հետ,որ առաջիկա 2 ամսվա ընթացքում հայկական կողմին կներկայացվի նոր բլոկի կառուցման համար անհրաժեշտ ֆինանսական մոդելի բացվածքները:

10. <u>Ստորագրությունը, ամսաթիվը</u>

07.11.2023թ.